

ԲԱԺԻՆ 1. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 1: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ
SECTION 1: TEACHING AND UPBRINGING

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Բարբարյան Մերոպ
*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ,
Հայաստան*

Համառոտ ներածական: Հոդվածում ներկայացված են ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հարցման արդյունքները: Դրանց վերլուծությունը բացահայտեց մեր հանրապետության հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության իրականացմանը և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի արդյունավետ դասավանդմանը խոչընդոտող մի շարք հիմնախնդիրներ:

Հիմնախնդիրը: Ներկայումս դիտարկվում է դպրոցահասակ երեխաների առողջության վիճակի բացասական դինամիկա՝ կրտսեր դասարաններից մինչև ավագ դպրոց, նրանց ֆիզիկական պատրաստվածության անբավարար մակարդակ, հետաքրքրության և կայուն դրդապատճառների բացակայություն սիստեմատիկ ֆիզկուլտուրային պարապմունքների նկատմամբ: Այս պարագայում դպրոցական ֆիզիկական դաստիարակությունն իր գլխավոր բաղադրամասով՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայով, միտված է հաղթահարելու նշված խնդիրները: Սակայն այդ գործընթացի արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են մի շարք հիմնախնդիրներ:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Այսօր ֆիզկուլտուրային կրթության զարգացման հիմնախնդիրը պայմանավորված է դպրոցականների բազային, հիմնարար ֆիզիկական դաստիարակության կազմակերպմամբ, իսկ դրա որակի գլխավոր ձեռքբերումը՝ անձի ֆիզիկական առողջության ձևավորմամբ: Վերջին տարիներին, ինչպես արտերկրում [5, 10], այնպես էլ մեր հանրապետությունում [3, 4, 8], դիտարկվում են դպրոցականների առողջության ցուցանիշների բացասական

միտում և նրանց ֆիզիկական զարգացման ու ֆիզիկական պատրաստվածության մակարդակի նվազում: Մտահոգիչ տվյալներ են արձանագրված նաև «Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի 2013-2014 թթ. ազգային հետազոտության վերլուծություն» զեկույցում [1]: Այս հանգամանքը անմիջականորեն ազդում է նախազորակոչային և գորակոչային տարիքի տղաների առողջության և ֆիզիկական պատրաստվածության վրա, ինչի մասին խոսել է նաև պաշտպանության նախկին նախարար Վ. Սարգսյանը՝ նշելով. «Հայաստանում առողջական խնդիրների պատճառով բանակից տարկետում ստացող զինվորների քանակը մտահոգիչ է» [2]:

Ստեղծված իրավիճակը պայմանավորված է նաև կրթության համակարգի, մասնավորապես տարբեր մակարդակներում ֆիզկուլտուրային կրթության իրականացմամբ: Ցավոք սրտի, շատ դպրոցներում ֆիզիկական դաստիարակության կազմակերպման որակը չի համապատասխանում երեխաների ժամանակակից պահանջներին, հետաքրքրություններին և պահանջմունքներին [4, 7]: Միևնույն ժամանակ արդեն երկար տարիներ խիստ քննադատության է ենթարկվում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի անցկացման դաս-դասարանային ձևը, քանի որ, ինչպես գտնում են որոշ հեղինակներ, այն չի ապահովում սովորողների շարժողական ակտիվության անհրաժեշտ և բավարար մակարդակ [6]:

Հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության իրականացման վրա ազդող և դեռևս չլուծված խնդիրներից են նաև ժամանակակից և եղած մարզադահլիճների վերակառուցման ու նորոգման բացակայությունը, դպրոցական առարկայական ծրագրերի աճող պահանջները, որոնք սահմանափակում են դպրոցականների շարժողական ակտիվությունը, ինչպես նաև ուսուցիչների ցածր վարձատրությունը:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Մեր հետազոտության նպատակն է վեր հանել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության արդյունավետ իրականացմանը խոչընդոտող հիմնախնդիրները:

Հետազոտության նորույթը: Վեր են հանվել ժամանակակից պայմաններում մեր հանրապետության հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության իրականացման, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման հիմնական խնդիրները:

Բանալի բառեր: Հանրակրթական դպրոց, ֆիզիկական դաստիարակություն, «Ֆիզիկական կուլտուրա» առարկա, հիմնախնդիրներ:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է մեր հանրապետության ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների կարծիքը ֆիզիկական դաստիարակության արդյունավետ իրականացմանը խոչընդոտող հիմնախնդիրների վերաբերյալ: Հարցաթերթիկների միջոցով թղթային և առցանց տարբերակով՝ Google ձևաթղթի միջոցով, կազմակերպվել է հարցում, որին մասնակցել են հինգ մարզերի (Կոտայք, Շիրակ, Սյունիք, Արարատ, Արմավիր) և Երևան քաղաքի 32 դպրոցների 58 ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ: Հարցմանը մասնակցած ուսուցիչների միջին տարիքը կազմել է 38, մանկավարժական ստաժը՝ 13,5 տարի: Նրանց մեծամասնությունը՝ շուրջ 81 տոկոս, ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն, 9,6 տոկոսը՝ մանկավարժության մագիստրոսի աստիճան, 5,8 տոկոսը՝ միջին մասնագիտական կրթություն, 3,8 տոկոսը՝ միջնակարգ:

Դպրոցում ֆիզիկական դաստիարակության իրականացման և «Ֆիզիկական կուլտուրայի» դասերի անցկացման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ և նյութատեխնիկական ապահովում: Ուսումնասիրված դպրոցների 71 տոկոսը, ըստ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, ունի դահլիճների ու հանդերձարանների վերանորոգման կարիք, և միայն 21 տոկոսի դեպքում է նշվում, որ դպրոցներում դրանք վերանորոգված են: Դպրոցների մեծ մասը՝ շուրջ 80 տոկոս, ունի նոր և ժամանակակից մարզագույքի կարիք:

Անկասկած, դպրոցի պայմանները և մարզագույքը իրենց ազդեցությունն են թողնում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսումնական նյութի ամբողջ ծավալով իրականացման վրա. եթե պայմանները բավարար են, ապա նախատեսված ուսումնական նյութը կանցկացվի ամբողջությամբ: Սակայն ուսումնասիրված դպրոցների պայմաններն ու գույքը ուսուցիչներին հնարավորություն չեն տալիս ամբողջ ծավալով իրականացնելու չափորոշչի և ծրագրի պահանջները: Դա առավելապես անդրադառնում է ընտրովի ուսումնական նյութի, մարմնամարզական վարժությունների և աթլետիկական վարժությունների անցկացման վրա: Պայմանների մատչելիության առումով ուսումնասիրված դպրոցներում առավել հարմար է շարժախաղերի, վոլեյբոլի, բասկետբոլի և ֆուտբոլի անցկացումը:

Ֆիզիկական կուլտուրայի դասի անցկացման արդյունավետությունը պայմանավորված է նաև դահլիճում դասարանների քանակով և աշակերտների թվով: Եթե նույն դասաժամին դահլիճում դաս են անում երկու դասարան, այն էլ՝ տարբեր դասարաններ, ապա արդյունավետություն ապահովելը շատ

դժվար կլինի: Պարզվեց, որ 36 տոկոս դեպքերում հաճախ միաժամանակ նույն դահլիճում դաս են անում երկու դասարան, իսկ 8 տոկոս դեպքերում միշտ այդպես է լինում: Պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ հիմնականում այն դպրոցներում, որտեղ չորս հարյուրից ավել աշակերտներ կան, հաճախ կամ միշտ նույն դասաժամին դահլիճում դաս է անում երկու դասարան: Այս իրավիճակը կարող է կապված լինել դպրոցի պայմանների, պլանավորման ու դասացուցակի կազմման որոշակի խնդիրների կամ տվյալ աշակերտների թվի համար դպրոցի պայմանների անհամապատասխանության հետ:

Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգայնությունը (սիստեմայնությունը) ապահովելու համար կարևոր կազմակերպչական ձևեր են արտադասարանական պարապմունքները: Պարզվեց, որ միայն ուսումնասիրված դպրոցների 37 տոկոսն է արտադասարանական պարապմունքները կազմակերպում սիստեմատիկ ձևով, դպրոցների 29 տոկոսի դեպքում դրանք ունեն էպիզոդիկ բնույթ, իսկ դպրոցների 34 տոկոսը, կարելի է ասել, ընդհանրապես չի կազմակերպում արտադասարանական պարապմունքներ:

Հարցման վերլուծության ընթացքում արձանագրվեց դրական երևույթ. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշի և ծրագրի «Ընտրովի ուսումնական նյութ» բաժնում ընդգրկված բոլոր ձևերը տարբեր դպրոցներում կիրառվում էին. լողն ու դահուկային պատրաստությունը՝ մեկական դպրոցում (Մասիս և Ծաղկաձոր քաղաքներում համապատասխանաբար), ըմբշամարտն ու ուժային պատրաստությունն անցկացնում է դպրոցների 4 տոկոսը: Այլ դեպքերում ընտրովի ուսումնական նյութին հատկացվող ժամերը ուսուցիչները հիմնականում լրացնում են ծրագրի այլ բաժիններով: Կարծում ենք՝ այսպիսի իրավիճակը, երբ ընտրովի ուսումնական նյութին հատկացվող ժամերը լրացվում են ծրագրի այլ բաժիններով, անհրաժեշտություն է առաջացնում կա՛մ ընդլայնելու «Ընտրովի ուսումնական նյութ» բաժնի մարզաձևերի քանակը, կա՛մ ծրագրում տալու առավել շատ կիրառվող ձևերի խորացված նյութ: Ենթադրում ենք՝ որոշ դպրոցներում ընտրովի ուսումնական նյութի ժամերը շախմատով կամ գիտելիքների հիմունքներով լրացնելը կարող է պայմանավորված լինել համապատասխան պայմանների բացակայությամբ (օրինակ, ինչպես նշել են ուսուցիչները. «Ձմռանը դահլիճում ցուրտ է»), սակայն դա այնքան էլ նպատակահարմար չէ, քանի որ պետք է ձգտել առնվազն ապահովել աշակերտների նվազագույն շարժողական ակտիվություն:

Ուսուցիչների կեսից ավելին՝ 56 տոկոսը, կարծում է, որ շաբաթական 3 դասաժամը բավարար է՝ լուծելու դպրոցականների ֆիզիկական դաստիարակության խնդիրները, 36 տոկոսի կարծիքով այդքան դասաժամերով այն լիարժեք իրականացնել հնարավոր չէ: Չնայած հետազոտության ընթացքում արձանագրված մի շարք խնդիրներին, որոնք ազդում են ֆիզիկական դաստիարակության արդյունավետ իրականացման վրա, այնուամենայնիվ ուսուցիչների մեծամասնությունը՝ 80 տոկոսը, գտնում է, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկան այս պայմաններում էլ հնարավորություն է տալիս լուծելու ֆիզիկական դաստիարակության հիմնական խնդիրները՝ առողջարարական, կրթական և դաստիարակչական: Նրանց կարծիքով ստեղծված իրավիճակում էլ այն դեռ ոչ միայն կրթական կարևոր առարկա է, այլև աշակերտների առողջության պահպանման միջոցներից մեկը:

Հարցման ընթացքում պարզեցինք նաև ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների կարծիքը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի նոր ծրագիր մշակելու կամ գործող ծրագիրը լրամշակելու վերաբերյալ: Ուսուցիչների շուրջ կեսը կարծում է, որ նոր ծրագիր մշակելու անհրաժեշտություն չկա, մյուս կեսի կարծիքներն էլ գրեթե հավասարապես բաժանվում են երկու խմբի, որից մեկը գտնում է, որ անպայմանորեն պետք է մշակել նոր ծրագիր, մյուսն առաջ է քաշում եղած ծրագիրը լրամշակելու անհրաժեշտությունը: «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչը և ծրագրը մշակվել են 13 տարի առաջ՝ 2007 թվականին, իսկ 2012 թվականին կատարվել են աննշան փոփոխություններ: Մեր կարծիքով էլ անհրաժեշտություն կա այն թարմացնելու, լրամշակելու և գիտահետազոտական որոնումների արդյունքում առավել համապատասխանացնելու մեր հանրապետությունում ստեղծված ներկայիս վիճակին:

Հետազոտությունից հետո հողվածը պատրաստելիս արդեն համընդհանուր քննարկման ներկայացվեց «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի նոր ծրագրի նախագիծը, որի կառուցվածքը, բովանդակությունը, կիրառված մոտեցումները առանձին քննարկման և վերլուծության առարկա են:

Ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ զրույցներում նրանք նշում են, որ իրենց աշխատանքը բարդացել է, և դասերի անցկացման ընթացքում առաջ են եկել մի շարք խնդիրներ՝ պայմանավորված դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) աշակերտների առկայությամբ: Պետք է նշենք, որ ուսուցիչները չեն դժգոհում, այլ բարձրաձայնում են իրենց մտահոգությունն առ այն, որ ֆիզկուլտուրայի ուսուցիչը միայնակ ի վիճակի չէ ապահովել արդյունավետ և անվտանգ դասի անցկացում ԿԱՊԿՈՒ ա-

շակերտների ու մնացած աշակերտների հետ միաժամանակյա աշխատանքի ընթացքում: Որպես «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասի անցկացման արդյունավետության վրա ազդող գործոն կարևոր էր պարզել, թե ինչ խնդիրներ են առաջանում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում: Հարցման ընթացքում պարզվեց, որ ուսումնասիրված դպրոցներում (69 տոկոս) սովորում են ԿԱՊԿՈՒ աշակերտներ: Պետք է նշել, որ հարցված ուսուցիչներից միայն մեկն է նշել, որ ուսուցչի օգնականը օգնում է դասերի ժամանակ, մնացած դեպքերում ֆիզկուլտուրայի ուսուցիչը միայնակ է անցկացնում դասերը: Հարցման արդյունքում հնարավոր եղավ պարզել այն հիմնական խնդիրներն ու մեթոդական դժվարությունները, որոնք հանդիպում են դասերի անցկացման ժամանակ: Հիմնական դժվարությունները կապված են ԿԱՊԿՈՒ երեխաների ֆիզիկական ու մտավոր կարողությունների, նրանց սոցիալական հմտությունների, պայմանների ֆիզիկական մատչելիության և անհատական մոտեցման, անվտանգության ապահովման հետ: Սրանք խնդիրներ են, որոնք անմիջականորեն ազդում են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերի պլանավորման, անցկացման, դրանց արդյունավետության վրա:

Իրենց պատասխաններում ուսուցիչները, հընթացս նաև նշված խնդիրների հաղթահարման, իրենց տեսակետներն են արտահայտել, մասնավորապես ցուցաբերել անհատական մոտեցում, ունենալ առանձին ծրագրեր և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերի անհատական պլանավորում, նրանց հետ դասերի անցկացում հատուկ պատրաստված կամ վերապատրաստված մասնագետների կողմից, անհատական աշխատանքի համար համապատասխան վարձատրություն:

Ինչպես նշել էին ուսուցիչները, որոշ դեպքերում այդ երեխաների ծնողները նախընտրում են, որ իրենց երեխաները չմասնակցեն «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերին:

Հարցման վերլուծությունն ի հայտ բերեց նաև ուսումնասիրված դպրոցներում բժշկական հատուկ խմբում ընդգրկված աշակերտների մոտավոր թիվը՝ յուրաքանչյուր դպրոցում մինչև 11 աշակերտ: Այս խմբում ընդգրկված աշակերտները ազատվում են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերից, սակայն նրանց հետ ֆիզկուլտուրային պարապմունքները պետք է կազմակերպվեն հատուկ խմբերի ծրագրով, ինչը ուսումնասիրված ոչ մի դպրոցում չի իրականացվում:

Մասնագիտական գործունեության հիմնական մոտիվացիաներից են մասնագիտության մեջ կայանալու ներքին ձգտումը և նյութական որոշակի ա-

պահովվածության հասնելը: Հարցված ուսուցիչների միայն 11 տոկոսն է իր կատարած աշխատանքի դիմաց վարձատրությունը համարում բավարար, 27 տոկոսը՝ մասամբ բավարար, և մնացածը կարծում է, որ բավարար չէ: Նրանց կեսից ավելին նշել է, որ ավելի բարձր վարձատրության դեպքում իրենց կատարած աշխատանքի արդյունավետությունը ավելի բարձր կլիներ, 23 տոկոսը դժվարացել է պատասխանել այս հարցին: Դրական իրողություն է, որ նրանց մի մասի համար (21 տոկոս) վարձատրության չափը կարևոր չէ՝ աշխատանքի բարձր արդյունավետությունն ապահովելու համար:

Հարցաթերթիկի վերջում ուսուցիչներն հնարավորություն ունեին նշելու իրենց դիտարկումները արժարժված հարցերի վերաբերյալ, և այդ դիտարկումներն հիմնականում վերաբերում էին առարկայի դասավանդմանն առնչվող խնդիրներին, և նրանց կողմից ներկայացվել են տարբեր առաջարկություններ: Այդ դիտարկումները կներկայացնենք խմբավորված՝ առաջարկություններ և խնդիրներ բաժիններով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ուսուցիչների դիտարկումները՝ արժարժված հարցերի վերաբերյալ

ԽՆԴԻՐՆԵՐ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Զմռան ամիսներին դահլիճների չջեռուցվելը	Ծրագրում, բացի մարզախաղերից, նաև այլ մարզաձևերի ներառում
Դահլիճում երկու դասարանի միաժամանակ դաս անելը	15 տարվա աշխատանքից հետո ուսուցիչների թոշակի անցնելու անհրաժեշտություն
Պայմանների և մարզագույքի անբավարար վիճակը	Դպրոցում շաբաթը մեկ օր ֆիզկուլտուրային մասսայական միջոցառումների պարտադիր անցկացում
«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերի նկատմամբ դրական դրդապատճառների բացակայությունը	Առարկայի ծրագրի լրամշակում կամ նոր ծրագրի մշակում
Վարձատրության չափը	«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի շրջանակներում ընտրած մարզաձևի անցկացում, ավագ դասարաններում մարզաձևի ընտրության հնարավորություն
Դասարաններում աշակերտների մեծ թիվը	2-4-րդ դասարաններում շախմատին հատկացված ֆիզկուլտուրայի դասաժամերի վերադարձ
-	Դպրոցներում ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումների թվի ավելացում

-	Դասարաններում աշակերտների թվի նվազեցում
-	1 դրույքաչափում ներառված դասաժամերի փոփոխություն՝ 22 ժամը դարձնել 18
-	Գնահատման մոտեցումների վերանայում

Դասարաններում աշակերտների թվի նվազեցումը, ինչին մենք ևս համակարծիք ենք, նույնպես կարող է դրական ազդեցություն ունենալ հանրակրթական բոլոր առարկաների, այդ թվում՝ նաև «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման վրա: Նշենք, օրինակ, Ֆինլանդիայում տարրական և միջին դասարաններում աշակերտների միջին թիվը 20-ն է, ավագ դասարաններում՝ 19-ը: Իսկ «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» երկրներում (OECD) այդ թիվը համապատասխանաբար միջինը կազմում է 21 [9]: Մեր հանրապետության դպրոցներում աշակերտների թիվը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգով, ըստ որի՝ տարրական և միջին դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 35 է, ավագ դպրոցում՝ 30, և սովորաբար դասարանները համալրվում են նշված առավելագույն թվերին մոտ: Մեջբերված երկրների հետ համեմատած՝ տեսնում ենք, որ մեզ մոտ այդ թիվը նկատելիորեն բարձր է:

Եզրակացություն: Անցկացված հետազոտությունն ու գրականության աղբյուրների վերլուծությունը ի հայտ բերեցին մի շարք հիմնախնդիրներ. մասնագետները որպես դպրոցականների ֆիզիկական դաստիարակության իրականացման հիմնական խնդիրներ նշում են՝ դպրոցականների կայուն հետաքրքրության բացակայություն ֆիզիկական կուլտուրայի դասերի նկատմամբ, դպրոցականների առողջության և ֆիզիկական պատրաստվածության ցածր մակարդակ, ֆիզիկական կուլտուրայի դասերի ցածր արդյունավետություն և ուսումնական օրվա ռեժիմում ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների չիրականացում, մեր հանրապետության դպրոցների անբավարար նյութատեխնիկական ապահովվածություն, ուսուցիչների ցածր վարձատրություն: Նշված խնդիրները առաջացել են ոչ մեկ օրում, և երբեմն էլ դրանց վիճակը աստիճանաբար ավելի է վատթարանում: Հանրակրթական դպրոցներում այդ խնդիրների արդյունավետ լուծումը կախված է կազմակերպչական, գիտա-

մերժողական, կադրային և նյութատեխնիկական ապահովումից, ինչպես նաև համապատասխան ֆինանսական ներդրումներից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սարգսյան Ս. Գ., Մելքունովա Մ. Վ., Մովսեսյան Ե. Ս., Բաբլոյան Ա. Ս., Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի 2013-2014 թթ. ազգային հետազոտության վերլուծություն, Երևան, «Արարկիր» բժշկական համալիր, Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, 2016, 96 էջ:
2. Հայաստանում առողջական խնդիրների պատճառով բանակից տարկետում ստացող զինվորների քանակը անհանգստացրել է նախարարին, 2016 թ., <http://newsarmenia.am/am/news/armenia/-Hayastanum-aroghjakan-khndirner-patjarov-/>:
3. Акоюн Е. С., Тер-Маргарян Н. Г., Онтогенез подвижности позвоночника школьников, Научовий часопис національного педагогічного університету імені М.П. Драгоманова. Серія 15. Науково-педагогічні проблеми фізичної культури. Випуск 4(29) 13. Київ, 2013, с. 20-26.
4. Акоюн С. А., Варданян Г. А., Анализ состояния здоровья студентов вуза (Армянский государственный экономический университет), Актуальные проблемы физической культуры и спорта в современных социально-экономических условиях: Материалы Международной научно-практической конференции, Чебоксары: ФГБОУ ВО Чувашская ГСХА, 2016, с. 174-178.
5. Замятина М. Р., Проблемы и перспективы развития физической культуры в России // Инновационные педагогические технологии: материалы II Междунар. науч. конф. (г. Казань, май 2015 г.). Казань: «Бук», 2015, с. 108-110.
6. Курамшин, Ю. Ф., Проблемы модернизации физического воспитания учащейся молодежи, Здоровье – основа человеческого потенциала-проблемы и пути их решения, СПб.: Изд-во: СПбГПУ, 2011, Т. 6, № 1, с. 353-354.
7. Латыпов И. К., Здоровье детей и проблемы физического воспитания школьников // Педагогика, психология и медико-биологические проблемы физического воспитания и спорта, 2009, № 10, с. 102-105.
8. Тер-Маргарян Н. Г., Исследование подвижности позвоночника школьников и методика ее совершенствования.- Автореф. дисс.к.п.н., Ереван, 2007, 21 с.
9. Average group sizes in basic education in Finland below the OECD average, <https://www.oph.fi/en/news/2019/average-group-sizes-basic-education-finland-below-oecd-average>.
10. Teaching America’s kids a healthy lifestyle: physical education in public schools, 2014, <https://www.heart.org/-/media/files/get-involved/advocacy/teaching-americas-kids-a-healthy-lifestyle-physical-education-in-public-schools.pdf?la=en>.

МНЕНИЕ УЧИТЕЛЕЙ О ПРОБЛЕМАХ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ

Барбарян Месроп

*Государственный институт физической культуры и спорта Армении,
Армения*

Аннотация

В статье представлены результаты анкетирования учителей физической культуры. Анализ результатов выявил ряд проблем, препятствующих реализации физического

воспитания в общеобразовательных школах республики Армения и эффективному преподаванию предмета «Физическая культура».

Проблема. В настоящее время наблюдается отрицательная динамика состояния здоровья детей школьного возраста от младших до старших классов, недостаточный уровень их физической подготовленности, отсутствие интереса и устойчивой мотивации к систематическим занятиям физической культурой. В данном случае школьное физическое воспитание, основным компонентом которого является предмет «Физическая культура», направлено на преодоление указанных проблем. Однако эффективной реализации этого процесса препятствует ряд проблем.

Ключевые слова: общеобразовательная школа, физическое воспитание, школьный предмет «Физическая культура», проблемы.

Список использованной литературы

1. Саргсян С. Г., Мелкумова В., Мовсесян Е., Баблоян А. С., Поведение здоровья детей школьного возраста в Армении в 2013-2014 гг. Национальный анализ исследований, Ереван. Медицинский комплекс «Арабкир» - институт здоровья детей и подростков, 2016, 96 с.
2. <http://newsarmenia.am/am/news/armenia/-Hayastanum-aroghjakan-khndirner-patjarov/>
3. Акопян Е. С., Тер-Маргарян Н. Г., Онтогенез подвижности позвоночника школьников, Научный часопис національного педагогічного університету імені М. П. Драгоманова. Серія 15. Науково-педагогічні проблеми фізичної культури. Випуск 4(29) 13. Київ, 2013, с. 20-26.
4. Акопян С. А., Варданян Г. А., Анализ состояния здоровья студентов вуза (Армянский государственный экономический университет), Актуальные проблемы физической культуры и спорта в современных социально-экономических условиях: Материалы Международной научно-практической конференции, Чебоксары: ФГБОУ ВО Чувашская ГСХА, 2016, с. 174-178.
5. Замятина М. Р., Проблемы и перспективы развития физической культуры в России // Инновационные педагогические технологии: материалы II Междунар. науч. конф. (г. Казань, май 2015 г.). Казань: Бук, 2015, с. 108-110.
6. Латыпов И. К., Здоровье детей и проблемы физического воспитания школьников // Педагогика, психология и медико-биологические проблемы физического воспитания и спорта, 2009, № 10, с. 101-105.
7. Курамшин, Ю. Ф., Проблемы модернизации физического воспитания учащейся молодежи, Здоровье – основа человеческого потенциала – проблемы и пути их решения, СПб.: Изд-во: СПбГПУ, 2011, Т. 6, № 1, с. 353-354.
8. Тер-Маргарян Н. Г., Исследование подвижности позвоночника школьников и методика ее совершенствования. Автореф. дисс.к.п.н., Ереван, 2007, 21с.
9. www.oepi.fi/en/news/2019/average-group-sizes-basic-education-finland-below-oecd-average
10. www.heart.org/-/media/files/get-involved/advocacy/teaching-americas-kids-a-healthy-lifestyle-physical-education-in-public-schools.pdf?la=en

TEACHERS' OPINION ABOUT THE PROBLEMS OF IMPLEMENTATION OF PHYSICAL EDUCATION IN SECONDARY SCHOOL

Barbaryan Mesrop

*Armenian State Institute of Physical Culture and Sport
Armenia*

Summary

The article presents the results of a survey of the teachers of physical education. The analysis revealed a number of problems hindering the implementation of physical education in the general

education of the Republic of Armenia and the effective teaching of "Physical Culture" school subject

The problem. Currently, the negative dynamics of the health status, insufficient level of physical fitness, lack of interest and stable motivation for systematic physical training of school-age children are observed, from primary to high school. In this case, school physical education, with its main component of "Physical Culture", is aimed to overcome the abovementioned problems. However, the effective implementation of this process is hampered by a number of issues.

Keywords: General education, physical education, school subject "Physical culture", problems.

References:

1. Sargsyan S. G., Melkumova M. V, Movsesyan E. M, Babloyan A. S., The analysis of the 2013/2014 national research "Health behavior in school-aged children in Armenia.- Yerevan: "Arabkir" Joint Medical Center - Institute of Child and Adolescent Health, 2016, 96 p.
2. The Minister is concerned about the number of inductees receiving deferrals from the army due to health problems in Armenia, 2016, <http://newsarmenia.am/am/news/armenia/-Hayastanum-aroghjakan-khndirner-patjarov-/>.
3. Hakobyan E. S., Ter-Margaryan N.G., Ontogeny of spine mobility of schoolchildren, Scientific journal of the National Pedagogical University named after M.P. Dragomanova. Series 15. Scientific pedagogical problems of physical cultura. Edition 4(29) 13.Kiev, 2013, pp. 20-26.
4. Hakobyan S. A., Vardanyan G. A., Analysis of the health status of students (Armenian State University of Economics), Actual problems of physical culture and sports in modern socio-economic conditions: Materials of the International scientific-practical conference, Cheboksary: Chuvash State Agrarian University, 2016, pp. 174-178.
5. Zamyatina M. R., Problems and prospects for the development of physical culture in Russia, Innovative pedagogical technologies: Materials of the II international scientific conference (Kazan, May 2015), Kazan: Buk, 2015, pp. 108-110.
6. Kuramshin Yu. F., Problems of modernization of physical education of students, Health is the Basis of Human Potential: Problems and Solutions.- SPb.: Publishing house SPbPU, 2011, V. 6, № 1, pp. 353-354.
7. Latipov I. K., Children's health and problems of physical education of schoolchildren, Pedagogy, psychology and medico-biological problems of physical education and sports, 2009, № 10, pp. 102-105.
8. Ter-Margaryan N. G., The study of the mobility of the spine of schoolchildren and the method of its improvement. Dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences (PhD), Yerevan, 2007, 21 p.
9. Average group sizes in basic education in Finland below the OECD average, <https://www.oph.fi/en/news/2019/average-group-sizes-basic-education-finland-below-oecd-average>.
10. Teaching America's kids a healthy lifestyle: physical education in public schools, 2014, <https://www.heart.org/-/media/files/get-involved/advocacy/teaching-americas-kids-a-healthy-lifestyle-physical-education-in-public-schools.pdf?la=en>.

Материал был представлен и отправлен на рецензию: 23.09.2020

Принято к публикации: 05.10.2020

Рецензент: доктор пед. наук, проф. Ашот Чатинян

The material was submitted and sent to review: 23.09.2020

Was accepted for publication: 05.10.2020

Reviewer: Doctor of Sciences, Prof. Ashot Chatinyan